

Արփի Վարդումյան

## ՍՈՒՐԲ ՀՈՎՃԱՆ ՕՉՆԵՑՈՒ ՀԵՂԻՆԱԿԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԸ

**«Ծագումն արևու արեւելեան ճառագայթ ի տուն Թորգոմայ.  
Ի գերազանց լուսոյն մեզ առաւտուէ սուրբ Յովհաննես,  
Զահ անշիջանեկի, հայոց հայրապետ»**

(Չարական պր. առաքելոյն Յովհաննու և Աւանեցոյն, Դժ մանկունք)

**Բանալի բառեր՝ երաժշտական ժառանգություն, միջնադարյան մտածող,  
հայ կաթողիկոս, շարականների կանոն, եկեղեցական երգեցողություն**

Սուրբ Հովհան կամ Հովհաննես Գ Օձնեցին հայոց 34-րդ կաթողիկոսն է, հաջորդել է Եղիա Ա Արձիշեցուն և նախորդել Դավիթ Ա. Արամոննեցուն: Նա հայոց 132 հայրապետներից տասներորդն է, որ իր աստվածահաճո, ստեղծարար և ազգանվեր գործունեության շնորհիվ հետազայում դասվել է սրբերի կարգը: Ընդհանուր առմամբ հայոց եկեղեցին սրբադասման լուսապսակի է արժանացրել իր կաթողիկոսներից ընդամենը 12-ին, որոնցից երաժշտական աստվածատուր ձիրքերով օժտված են եղել Սր. Սահակ Ա Պարթևը, Սր. Հովհաննես Ա Մանդակունին, Սր. Հովհաննես Գ Օձնեցին և Սր. Ներսես Դ Շնորհալին:

Սր. Հովհան Օձնեցին ծնվել է Լոռու մարզի Օձուն գյուղում 650-670 թվականների միջև: Պատանեկան տարիքում նա աշակերտել է անվանի վարդապետ և գնավոր Թեոնորոս Քոթենավորին, ում մինչ այդ աշակերտել էր նաև հայոց մեկ այլ՝ նույնապես երաժշտական տաղանդով օժտված հայրապետ՝ Սահակ Գ Զորափորեցին – «Խաչի երգիչը», և չի բացառվում, որ այս երկուուր նույնիսկ դասընկերներ եղած լինեն: Պատանի Հովհաննեսի բնատուր ձիրքերն այնքան ակնհայտ ու բազմազան էին, որ արագորեն առաջադիմելով ուսման տարբեր բնագավառներում՝ դեռևս բավական երիտասարդ տարիքում նա արդեն վարդապետ է ձեռնադրվում: Իր լայնահուն աշխարհայացքի և փիլիսոփայական խորիմաստ դատողությունների շնորհիվ Սր. Հովհան Օձնեցին իրավամբ ստացել է «Խմաստասեր» պատվանունը<sup>1</sup> և 717-ին կաթողիկոս ձեռնադրվելով՝ իր հովվապետությունը շարունակել է մոտ 10 տարի՝ մինչև 726 կամ 727 թվականը<sup>2</sup>, որից հետո գրեթե երկու տարի ճգնավոր իմաստունի կյանք

<sup>1</sup> Կամ «մականունը», ինչպես նշել է Գ.Ա. Հակոբյանն իր «Շարականների ժանրը հայ միջնադարյան գրականության մեջ» գրքում (Երևան, 1980, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 144):

<sup>2</sup> Մաշտոցյան Մատենադարանի N 4505 ձեռագիրը (էջ 70-74) վկայում է, որ Օձնեցին հայոց հայրապետի գահից հրաժարվել է այն ընդունելուց մոտ 10 տարի անց՝ փոխանցելով այս Դավիթ Ա Արամոննեցուն, տե՛ս Սիեր Պապյան, «Հովհան Խմաստասեր Օձնեցի», Երևան, 1998, էջ 134:

վարելով հայրենի Օձունում՝ 728-ին կնքել է իր մահկանացուն Արդվի գյուղում և ամփոփվել տեղի եկեղեցու բակում: Հայոց եկեղեցական ամենից ստվարածավալ մատյաններից մեկը՝ Հայսմավուրբը, իր էջերում ապրիլի 17-ը պաշտոնապես հոչակել է Սրբ Հռիկան Գ Օձնեցու հիշատակի օր, քանզի դա հավանաբար նրա մահվան օրն է: Չնայած որ Օձնեցին դեռևս իր կյանքի օրոք էր հանձնել կաթողիկոսական գավազանը Դավիթ Ա Արամոնացուն, սակայն վերջինս նրա մահից հետո նոր միայն պաշտոնապես ստանձնել է հայոց հայրապետությունը:

Սուրբ Հռիկան Գ Օձնեցու ստեղծագործական գործունեությունը չափազանց բեղմնավոր է եղել. նախ և առաջ նա մեծ մտածող էր՝ քաջածանոթ անտիկ փիլիսոփայությանը: Հարելով հիմնականում մեծն Արիստոտելի հայացքներին՝ նա կարողացել է արդյունավետորեն կիրառել վերջինիս գաղափարախոսությունը՝ փիլիսոփայական իր սեփական դրույթների պաշտոնական հիմնավորման համար: Ըստ Օձնեցի՝ նյութական աշխարհին աստվածային էության դրսնորումն է, չնայած այն հանգամանքին, որ բնության հիմքը նա համարում էր ավանդական 4 տարրերը՝ հողը, ջուրը, օդն ու կրակը: Ուշագրավ են հատկապես Օձնեցու դատողություններն իմացության մասին. Ըստ նրա՝ իմացությունը ծայր է առնում չիմացությունից և հասնում գիտության: Իսկ գոյի մեկնաբանման խնդիրներում Հռիկան Օձնեցին ճիշտ է համարում գաղափարից դեպի իրն ընթացող ձանապարհը<sup>3</sup>: Փաստորեն, չնայած հոգևորականի իր բարձր կոչմանը, Օձնեցին իր մտավոր կերտվածքով իսկական գիտնական էր՝ բարիս ամենալայն իմաստով: Նրա գործունեությունն իրեն հասու բոլոր ասպարեզներում ունեցել է բարեկոնխիչ նշանակություն. դեռևս իր հայրապետության երկրորդ տարում նա հրավիրվել է մասնակցելու Դվինի հայտնի ժողովին, ուր քննարկվել է հայ եկեղեցու բարեկարգության հարցը, և արտասանել այնտեղ իր հայտնի «Ատենաբանություն»-ը<sup>4</sup>: Հռիկան Օձնեցին եղել է այն կաթողիկոսներից, որ բարեկարգել են եկեղեցին և պայքարել ժամանակի աղանդավորների դեմ<sup>5</sup>: Օձնեցին ձգտել է վերացնելու եկեղեցիներում գոյություն ունեցող ժամերգության տարրերությունները և հնարավորինս համակարգելու այս խնդիրը: Նա հայոց եկեղեցու ծեսի և արարողության ազգայնացման ջատագովն ու իրազործողն էր: «720 թ. Օձնեցին Դվինում հրավիրում է եկեղեցական ժողով, որին մասնակցում են 30-ից ավելի եպիսկոպոսներ, Աշոտ պատրիկը և այլ նախարարներ: Ժողովում Հռիկան Օձնեցին մի ուշագրավ ձառ է ասում, որի բովանդակությունից ակնհայտ են դառնում նրա՝ իմաստափրա-

<sup>3</sup> Հռիկաննես Օձնեցի, Երկեր, Ե., 1999, էջ 12 (Վ. Համբարձումյան):

<sup>4</sup> Կամ Ատենաբանությունը ըստ Գ. Հակոբյանի, տե՛ս Շարականների ժամանք..., էջ 114:

<sup>5</sup> Գ. Հակոբյան, Շարականների ժամանք հայ միջնադարյան գրականության մեջ, Երևան, 1980, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 144:

կան, աստվածաբանական և ծիսական հարցերում ունեցած գիտելիքները: Դվինի ժողովն ընդունում է 32 կանոն, որոնք մտել են «Կանոնագիրք հայոց»-ի մեջ<sup>6</sup>: Իր այս հոչակավոր ժողովածություն Օձնեցին, հայ իրականության մեջ առաջին անգամ ի մի բերելով մինչ այդ գոյություն ունեցող եկեղեցական տարրեր կանոնները, կարգավորել է հայ եկեղեցու դավանանքի և արարողակարգի հիմնական սկզբունքները: Սր. Հովհան Օձնեցու գրչին են դասվում վերոնշյալ «Ատենաբանություն», «Ընդդեմ երևութականների», «Ընդդեմ պավլիկյանների» ձառերը, «Քրիստոսի եկեղեցու կարգերի մասին», «Մեծ կիրակիի մասին», «Գիշերային ժամի մասին», «Հիշատակարան», «Հայաստանում տեղի ունեցած ժողովների մասին», «Քրիստոսի Բանի մարմնանալու անսասան հույսի դավանությունը, այլև ընդդեմ մեկ Քրիստոսի երկու բնության մեջ դավանողների» երկերը<sup>7</sup>: Շնորհիվ իր շքել և տպավորիչ արտաքինի, ինչպես նաև ճարտասանական ու բանաստեղծական ցայտուն ձիրքերի Օձնեցու արտասանած ձառերն ու քարոզները մշտապես հսկայական ներգործություն են ունեցել ներկաների վրա և մեծ համբավ բերել նրան:

Որպես հայոց հովանապետի՝ Զ. Օձնեցու համար կրոնական բարեկարգության մշտական հոգածության խնդիր է եղել նաև հոգևոր երաժշտությունը: Հայոց կայսողիկոս Հովհան Ա. Մանդակունուց հետո, որը եղել է Սր. Սահակ Պարիքի և Սր. Մեսրոպ Մաշտոցի անմիջական աշակերտը և հոգևոր երգերի հայտնի հեղինակ, Սր. Հովհան Օձնեցին նորովի կարգավորել ու խմբագրել է «Շարակնոց» ժողովածուն՝ համալրելով այն անհրաժեշտ երգերով և ամբողջական կանոններով<sup>8</sup>: Նշելի է, որ մինչև 8-րդ դարի սկիզբը հոգևոր երգերի մուտքը հայոց եկեղեցի բավական ազատ է եղել ու նույնիսկ դեռևս անկանոն բնույթը է կրել: Սակայն Հովհան Օձնեցին, օրեցօր առավել տարածվող աղանդավորական այլազան հոսանքներին դիմակայելու թելադրանքով, նաև ազգի հայրապետի իր բաձրագույն կարգավիճակի բերումով, հետզհետեւ առավել խստապահանջություն է ցուցաբերել հոգևոր երգերի տեքստերի և մեղեղիների հանդեպ՝ զտելով դրանց ելևէջները հայոց եկեղեցական երգեցողության ավանդական սկզբունքներին անհարիր տարբերից: Սյուս կողմից, VII դարը հայ եկեղեցում հնչող ձայնեղանակային և ժանրային կանոնակարգման շրջափուլն էր: Հովհան Օձնեցին ժամանակակիցն ու գաղափարակիցն էր Ստեփանոս Սյունեցի Երկրորդի, որին վերագրվում են շարականի սեռի և կանոնի ձևավորումը, ուր-ձայնի համակարգի տեսական հիմնավորումը, Ավագ Օրհնություն-

<sup>6</sup> Վան Եղիազարյան, Հայ հին գրականության պատմություն, Երևան, 2014, էջ 432:

<sup>7</sup> Հովհաննես Օձնեցի, Երկեր, Ե., 1999, տե՛ս նաև Վ. Եղիազարյան, Հայ հին..., էջ 434:

<sup>8</sup> Հենրիկ Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին (5-14-րդ դարեր), Երևան, 2012, Ամարաս, էջ 126:

ների հորինումը (*բաց ի վառ ձայնէն՝ զոր ասեն արարեալ Ներսիսի Շնորհալոյն. ըստ որում յիշէ զայս յետինս Կիրակոս պատոմից*)<sup>9</sup>, ինչպես նաև խազագրության սկզբնավորումը հայոց մեջ: Մբ. Հովհան Օծնեցին և Ստեփանոս Սյունեցի Բ-ն, ստեղծագործաբար զարգացնելով Դիոնիսիոս Արիսպագցու (կամ Արիոպագցու)<sup>10</sup> երաժշտության երկնային ծագման մասին հայտնի դրույթը, յուրովի հիմնավորել են այն սաղմոսների և գուրղաների իրենց խորիմաստ մեկնություններով: Քաջ գիտակցելով երաժշտական արվեստի հսկայական ազդեցությունը ունկնդիրների վրա՝ Օծնեցին պաշտոնապես ընդգրկել է հավուր պատշաճի երգեցողությունը եկեղեցական արարողակարգ և հոգևոր բարձրարվեստ երգերի միջոցով ժողովրդի լայն շերտերին հասու դարձրել Աստվածաշնչի Հին ու Նոր Կտակարանների բովանդակությանը, քանզի շարականների տեքստերի մեծ մասը կազմում էին Աստվածաշնչի պատումների բանաստեղծական հարասությունները<sup>10</sup>:

Բնությունը շոայլորեն օժտել էր Հովհաննես Օծնեցուն փառահեղ արտաքինով ու մեծ գիտնականի լայնահուն մտածողությամբ. «Վայելլազեղ եւ զեղեցկատես, ուշիւ եւ հանձարեղ». ահա թե ինչպես են բնութագրվում նրա արժանիքները Մաշտոցի անվան Մատենադարանի N 4505 ձեռագրում: «Հանձարեղ» ածականն այստեղ վերաբերում է նախ և առաջ նրա երաժշտական աստվածատուր ձիրքին: Զայոց հովվապետի մշտազբաղ առօրյայում Օծնեցուն հաջողվել է բավականաշափ ժամանակ տրամադրել եկեղեցական շարականերգությանը, քանզի հարստացրել է այն շուրջ երեք տասնյակ սրանչելի նմուշներով: Կարևոր է արձանագրել այն փաստը, որ նրա հեղինակած՝ շարականների չորս կանոնները 8-րդ դարից ի վեր պարտադիր կերպով կատարվում են դեկտեմբերի վերջին շաբաթվա ընթացքում՝ այն օրերին, երբ քրիստոնեական կաթողիկե եկեղեցիները հանդիսավորությամբ նշում են Հիսուս Քրիստոսի Սուլր Ծնունդը: Վերջնականապես սահմանելով հայոց եկեղեցում Սուլր Ծնունդն ու Անվանակոչությունը հունվարի վեցին նշելու կարգը՝ Հովհան Օծնեցին հատկապես դեկտեմբերի 24-ին և դրան հաջորդող շաբաթվա ընթացքում հնչեցնելու նպատակով ստեղծում է Ավագ կամ Մեծ տոնների հետևյալ 4 կանոնները, դրանք են. 1) Կանոն Դաւիթ Մարգարեին

<sup>9</sup> Հ. Գաբրիել Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, Վենետիկ, 1814, էջ 672, նաև՝ Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժշտ, Երևան, 1973, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 35, ծան. 121:

<sup>10</sup> Նշելի է, որ Հ. Բախչինյանն իր վերոնշյալ գրքում, ի տարբերություն նախորդ ուսումնասիրողների, չի կիրառում այս բնորոշումը. տե՛ս Արիփ Վարդումեան, Հենրիկ Բախչինեան, Շարականի գրապատմական ուղին, «Հայկագեան հայագիտական հանդէս», (գրախօսութիւն), Պէյրութ, 2013, էջ 497-501 (499):

եւ Յակոբայ Առաքելոյն, 2) Կանոն Սրբոյն Ստեփանոսի Նախավկային, 3) Կանոն Սրբոյն Պետրոսի եւ Պօղոսի, 4) Կանոն Որդուցն Որոտման (Սրբոյն Առաքելոցն Յակոբայ եւ Յովհաննու): Այս կանոններում ամփոփված էրգերին անդրադառնալուց առաջ անհրաժեշտ է համառոտ կերպով արծարծել հայոց շարականների հեղինակային պատկանելության կնճռոտ խնդիրը: Հարցն այն է, որ ձեռագիր և տպագիր տարբեր մատյաններում առկա են որոշ տվյալներ, որոնք լիովին չեն համընկնում միմյանց հետ, իսկ երբեմն նույնիսկ հակասում են միմյանց: Գալով Հովհան Օձնեցու հեղինակած շարականների չորս կանոններին կամ կարգերին և կամ էլ սարբերին<sup>11</sup>՝ հարկ է նկատի ունենալ, որ ինչպես դրանք, այնպես էլ վաղ միջնադարյան հոգևոր երգաստեղծության գրեթե բոլոր նմուշները հետագա դարերում տարբեր փոփոխությունների են ենթարկվել: Անշուշտ նկատի ունենք հատկապես այդ երգերի երաժշտական բաղադրիչները, որ ուշ միջնադարում սերնդեսերունդ էին փոխանցվում առավելապես բանավոր ավանդությամբ: Հայտնի է, որ 12-րդ դարում մեր ամենից մեծատաղանդ հայրապետը՝ Կիլիկյան հայոց թագավորության կաթողիկոս Սբ. Ներսես Շնորհալին, երաժշտական առումով վերախմբագրել է իրենից առաջ ստեղծված ողջ շարակնոցը՝ համահունչ դարձնելով այն իր ժամանակի գեղագիտական բարձր պահանջներին: Լինելով նրբաճաշակ արվեստագետ և տաղանդավոր երաժիշտ՝ վերջինս մշտապես ձգտել է հնարավորինս անխաթար պահել յուրաքանչյուր կանոնի և նույնիսկ ամեն մի երգի երաժշտական ոճական առանձնահատկությունը: Սակայն երբեմն խմբագրելու ընթացքում Շնորհալին կարող էր պարզապես վերաեղանակավորել որոշ երգեր, իսկ հաճախ էլ լրացնել որևէ կանոնի շարքում պակասող նմուշները սեփական ստեղծագործություններով: Խոսքն առավելապես այս կամ այն կանոնի վերջին միավորների («Մանկունք», «Համբարձի», «Ճաշու») կամ էլ կանոնն սկսող, «Օրինութիւն» կոչվող նմուշի մասին է: Ինչ վերաբերում է Հովհան Օձնեցու շարականներին, առաջին հայացքից կարող է թվալ, թե հարցը բավական պարզ է, քանի որ շարականների հեղինակների գրեթե բոլոր հայտնի ցուցակներում վերոնշյալ չորս կանոնների հեղինակը հենց Օձնեցին է համարվում: Սակայն Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ Հ. Գարրիել Ավետիքյանն իր «Բացատրութիւն շարականաց» հիմնարար աշխատության մեջ Դավիթ մարգարեին նվիրված կանոնի մասին գրում է. «Շարականս Դաւթի մարգարեին և Յակոբայ առաքելոյն ընծայեն բազումք Յովհաննու Օձնեցոյն կամ Իմաստասիրին. ումանք զամբողջ պատկերն, և ումանք զիարցն միայն.

<sup>11</sup> Նկատառնելի է, որ «Հայկագեան հայագիտական հանդէս»-ում լույս տեսած, վերը նշված գրախոսության մեջ կոպիտ վրիպակ է սպրդել. «սարք» բառի փոխարեն տպագրվել է «խարք», էջ 499:

(որպէս և յայսմաւուրսն ասի. ապրիլի ժեկան) և յօրինակ ինչ ընծայի Յոհաննու Մանդակունոյ, շփոթելով զայն ընդ Յովիաննու Իմաստասիրին»<sup>12</sup>: Փաստորեն, ըստ Ավետիքյանի, ոմանք Օձնեցուն են վերագրել լրկ այս կանոնի Հարցնը, իսկ ոմանք ել նույնիսկ շփոթել են նրան Հռիկան Մանդակունու հետ անուների նույնության պատճառով: Արգո գիտնականը հայտնում է նաև, որ «Նմա ընծայեն դարձեալ զյաջորդ շարականս աւագ տօնիցն, այսինքն զՍտեփանոսին, զգիլաւոր առաքելոցն Պետրոսի և Պողոսի, և զորդոց որոտմանց: Եթէ զերեսին զայն շարականս համեմատեմք առ Դաւթայն, ինքնին բանքն աղաղակեն՝ թէ ո՞չ միոյ երգողի են յօրինուածք, այլանմանք գոլով միմեանց յասացուածսն և յիմաստս: Իսկ եթէ զշարականն Դաւթի միայնակ՝ դիմիցեմք առընթեր գրուածոց Յովիաննու Իմաստասիրի, տեսանիցեմք իբր խակակութ պտուղ անհամ՝ առ հասունացեալ համեղաճաշակ պտորով. մինչ զի յետին աշակերտի նորա անվայելուց համարիմ ընծայել զայն, թո՞ղ թէ այնպիսի ճարտարուեստ վարդապետի: Վասն որոյ վրիպակ համրաւոյ կարծեմք՝ Յովիաննու Իմաստասիրի տալ զայս շարական, այլ այլում ումեք աննշան երգեցողի համարել՝ ո՞չ է անիրաւութիւն»<sup>13</sup>: Կարծում ենք, որ արգո հետազոտողը Օձնեցու հորինած առաջին կանոնի շարականների զեղարվեստական արժանիքները ակնհայտորեն թերագնահատում է՝ նույնիսկ պնդելով, որ վերջինս չի կարող այս կանոնի երգերի հեղինակը համարվել, քանզի դրանք «խակակութ» են և անհամ: Սակայն հարկ է հաշվի առնել այն հանգամանքը, որ սրանք հեղինակի առաջին ստեղծագործություններն են, որոնք նա հորինել է դեռևս երիտասարդ տարիքում և, այսուամենայնիվ, կարողացել է ներդաշնակ կերպով համատեղել Հին Կտակարանի Դավիթ մարգարեի և Նոր Կտակարանի Հակոբ տեառնելքոր ցայտուն կերպարները միևնույն կանոնի մեջ: Շարականագետ Խ. Պայյանն այսպես է բնութագրում վերոնշյալ համադրությունը. «Կանոնի օրինության, հարցի և մյուս երգերի մեջ շարականագիրը գեղեցիկ ու պարզ լեզվով հենվելով Սուրբ Գրքի պատմության վրա, պարբերաբար երգում է Աստվածատուր Դավթի և Արդարն Հակովի աստվածահածո և ուսանելի վարքի մասին»<sup>14</sup>:

13-րդ դարի պատմիչ Կիրակոս Գանձակեցին իր «Պատմություն Հայոց» աշխատության՝ Շնորհալուն վերաբերող բաժնում վերջինիս է ընծայում իննդրո առարկա կանոններից՝ Որոտման որդիների կանոնի «Օրինութիւն»-ը, ինչպես նաև Սբ. Պետրոսի և Պողոսի կանոնի «Օրինութիւն»-ը, «Մանկունք»-ը և

<sup>12</sup> Հ. Գ. Աւետիքեան, Բացատրութիւն շարականաց, էջ 120-121:

<sup>13</sup> Անդ, էջ 121:

<sup>14</sup> Խ. Պայյան, Հռիկան Օձնեցուն վերագրվող շարականներ, «Էջմիածին», 1984, 11-12, էջ 92:

«Համբարձի»-ն: Ուշագրավ է, որ Գանձակեցին իր նույն երկի՝ Հովհան Օձնեցուն վերաբերող մասում որևէ ակնարկ անգամ չի անում Շնորհալուն վերագրվող շարականների մասին, այլ պարզապես վերոնշյալ չորս կանոնները համարում է Օձնեցունը: Անվանի երաժշտագետ Նիկողոս Թահիմիզյանը Շնորհալուն նվիրված իր աշխատության մեջ խնդրու առարկա միավորները վերագրում է վերջինիս, այսինքն՝ Պողոս և Պետրոս առաքյալներին նվիրված կանոնի միայն երեք երգերն է համարում Հովհան Օձնեցունը (Հարցը, Ողորմեան և Տէր յերկնիցը), ինչպես նաև Որոտման որդիների կանոնի Օրհնութիւնը նույնպես համարում է Շնորհալունը՝ առանց վկայակոչելու որևէ սկզբնաղբյուր, սակայն հավանաբար ի մտի ունենալով վերը նշված աղյուրները<sup>15</sup>: Դատելով այդ նմուշների ոճական որոշ տարբերություններից՝ Օձնեցու այլ շարականների համեմատությամբ, թերևս կարելի է ընդունել դրանց՝ Շնորհալու գրչին պատկանելը: Սակայն մյուս կողմից ել, օրինակ, Օձնեցու Որոտման որդիների կանոնի վերջին նմուշը՝ «Մանկունք»-ը, իր երաժշտական բաղադրիչով գրեթե նույնությամբ համընկնում է Շնորհալու՝ Հովհան Ուկեբերանին նվիրված «Մանկունք»-ի մեղեդու հետ. տարբեր են լոկ սրանց տեքստերը: Այսուհանդերձ, այս նմուշն ավանդաբար համարվում է Օձնեցունը: Խնդիրն այն է, որ ուշ միջնադարում՝ խազանշանների բանալու կորսատից հետո, շարականների մեղեդիները հետզհետեւ ենթարկվել են որոշ փոփոխությունների. հայաշխարհի տարբեր գավառների եկեղեցիներում միևնույն շարականը կարող էր կատարվել միմյանցից բավականին տարբերվող եղանակներով՝ առաջանելով բազում տեղային տարբերակներ կամ առնվազն երգածքներ: Սա է պատճառը, որ Նոր հայկական ձայնանիշերով զանազան վայրերում գրառված շարակնոցներում միևնույն երգերի մեղեդիները տարբերվում են միմյանցից առավել կամ պակաս չափով: Այս հանգամանքն է, որ մեծապես բարդացնում է խազերի վերծանության խնդիրը մեր օրերում: Ինչպես Վենետիկի Միսիթարյան միաբանության անդամ, հմուտ շարականագետն Հ. Ղևոնդ Տայանն է գրել իր «Շարական Հայաստանեայց Եկեղեցւյ» բազմահատոր ձայնագրյալ ժողովածուի անտիպ Ա. հատորի ձեռագրում, «ղիտելի են շարականներու շատ մասեր, ուր մեն մի վանկ, մինչ իր բնագրի մեջ կը կրէ լոկ առողանական նշան մը, կամ միջակ տևողութեամբ պարզ խազ մը, և կամ ընդհակառակն՝ ոչ մեկ հատ անոնցմէ՝ 1875-ի Էջմիածնի հրատարակութեան մեջ խազերու կամ ձայներու խճողումով բերնաւորուած են անոնք՝ մեկէ աւելի ամանակներով: Բազմաթիւ խմբերգ շարականներ՝ իրենց

<sup>15</sup> Ն. Թահիմիզյան, Ներսես Շնորհալին երգահան և երաժիշտ, Երևան, 1973, ՀՍՍՀ ԳԱ հրատ., էջ 19:

պարզութենէ բոլորովին հեռացած՝ ծանրաբեռնուած խազերու խմբիկներու շարքերով՝ Ստեղիի վերածուած են»<sup>16</sup>: Նկատենք, որ Հ. Դ. Տայանն այն անվանի երաժշտագետն է, որ անցյալ դարում առաջին անգամ եվրոպական ձայնանիշերով գրառել և լուս է ընծայել Մք. Ղազարի Մայրավանքում 1717 թվականից ի վեր հնչող և Վենետիկի Միաթարյան միաբանության ավանդույթը կազմող շարականների բազմահատոր ժողովածուն<sup>17</sup>:

Բացի քննարկվող չորս կանոնների շարականներից, որոշ աղբյուրներում հատուկ կերպով նշված է Օձնեցու «Մեղաք յամենայնի» երգը՝ որպես առանձին նմուշ, սակայն սա ոչ այլ ինչ է, եթե ոչ Դավիթ մարգարեի և Հակոբ առաքյալի կանոնի երկրորդ միավորը՝ *Հարցը*, որն այսպիսով կարևորվում է որպես հեղինակին լավագույնս բնութագրող ստեղծագործություն: Գ. Հակոբյանը համարում է, որ ««Մեղաք յամենայնի» շարականը ապաշխարական Ողորմեանների է նման, քան թե *Հարցի*»<sup>18</sup>:

Եվ վերջապես, միջնադարյան որոշ ցուցակներում էլ Օձնեցուն է վերագրվում 7-րդ դարի տաղանդավոր կաթողիկոս Կոմիտաս Աղցեցու «Անրսկիզրն բանն Աստուած» *Համբարձին*, որը, ըստ Ն. Թահմիզյանի, Դավիթ մարգարեի կանոնի «Անրսկիզրն Աստուած» *Ողորմեայի* սկզբնաբառերի նմանության հետևանքով ծագած թյուրիմացության արդյունք կարելի է համարել: Սակայն մի այլ հմուտ շարականագետ՝ Խորեն Պալյանը, անհավանական չի համարում, որ շարականիս հեղինակը կարող էր և Հովհան Օձնեցին լինել<sup>19</sup>: Ամեն դեպքում նշելի է, որ դեռևս 1959-ին Հակոբ Անապյանի հրատարակած «Հայկական մատենագրություն» հիմնարար աշխատության Ա. հատորում գետեղված՝ Շարականների հեղինակների երեք ցուցակներում, ինչպես նաև երկու շափածո ցուցակում Ավագ կամ Մեծ տոնների չորս կանոններն ամբողջությամբ վերագրվում են Հովհան Օձնեցի կաթողիկոսին<sup>20</sup>:

Հովհան Օձնեցին հեղինակել է 28 շարական (եթե հաշվի առնենք այս կանոնների Հարցերին կից Գործատները՝ որպես առանձին միավորներ), որոնք շատ բազմազան են իրենց բնույթով: Այս երգերը պարունակում են և՝ հնագույն

<sup>16</sup> Հ. Դ. Տայեան, Անտիպ Ա. հատոր, էջ 118:

<sup>17</sup> Այս մասին տե՛ս Արփի Վարդումյան, Վենետիկի Միաթարեան միաբանութեան անդամ Հայր Ղեւոնդ Տայեանի «Շարական Հայաստանեայց եկեղեցւոյ» բազմահատոր շարականցի անտիպ Ա. հատորը, Վենետիկի Միաթարեան միաբանութիւն – 300 (23-25 հոկտեմբեր, 2017) Միջազգային զիստաժողով. Զեկուցումների ժողովածու, էջ 598-618:

<sup>18</sup> Գ. Հակոբյան, Շարականների ժամբը..., էջ 145:

<sup>19</sup> Խորեն Պալյան, Հովհան Օձնեցուն վերագրվող շարականները, Էջմիածին, 1984, թիվ 11-12, էջ 90:

<sup>20</sup> Հակոբ Անապյան, Հայկական մատենագրություն, Երևան, 1959, հ. Ա, էջ LXV-LXXIV:

վանկային հորինվածքով, և՝ ավելի զարգացած՝ ծորերգային ընթացքով նմուշներ, ինչպես նաև *Ստեղի* ոճի՝ առավել ծանր բնույթի ձոխ ստեղծագործություններ: Դրանց երաժշտական բաղադրիչների վերլուծությունից կարելի է եզրակացնել, որ Օձնեցու նախասիրած ձայնեղանակները Երրորդ ու Շորրորդ Զայն և Կողմէնանակներն են՝ իրենց հատուկ դարձվածներով/հանդերձ:

Կանոններից առաջինը նվիրված է Դավիթ մարգարեին և Հակոբ առաքյալին, որտեղ Օձնեցին զուգադրել է երկու «արյունակից արքերին»<sup>21</sup>: Այն բաղկացած է հինգ երգից. *Օրհնութիւն՝* «Յաղթող գտաւ», *Հարց՝* «Մեղաք յամենայնի», *Ողորմեա՝* «Անսկիզբն Աստուած», *Տէր յերկնից՝* «Երդուաւ տէր», և *Մանկունք՝* «Օրհնեցէք գտէր»: Այս կանոնի բոլոր միավորներն ընթանում են յոթերորդ ձայնեղանակում՝ Դժում: Ինչպես վերը նշվեց, այս կարգը կամ սարքը կազմող երգերն արտացրում են Աստվածաշնչի Հին Կտորակարանի երկու սիրված կերպարների համայրումը մեկ կանոնի երգերում, որոնց բովանդակությունից պարզ է դառնում վերնազրի իմաստը. Դավիթ մարգարեն և Հակոբ առաքյալը ամփոփված են միևնույն հարաստության շրջանակում, քանզի հայտնի է, որ Հիսուսը Դավիթի ցեղից էր սերում, իսկ Հակոբը վերջինիս տեառնեղբայրն էր, ինչպես նշվում է նաև «Յաղթող գրտաւ» *Օրհնութեան* առաջին պատկերի վերջին տան մեջ: Այն կազմված է երկու պատկերից, որոնցից առաջինի 3 տները ներածական բնույթ ունեն, իսկ երկրորդ պատկերը հակառակում է առաջինին՝ իր խրոխս ու վճռական տրամադրությամբ: Այս կանոնի *Հարցը* վերը հիշված «Մեղաք յամենայնի» երգն է, որն իր բնույթով առավել մոտ է *Ողորմեայի*, իսկ մեղեղին վերջնահանգածում ընդգծում է դրա խնդրվածքային բնույթը: Այս կանոնում առանձնահատուկ նշանակություն ունի «Օրհնեցէք գտէր յօրհնութիւն» *Մանկունքը*, որը հետագայում, մեծապես սիրվելով, դարձել է Երուսաղեմի *Սրբոց Հակոբեանց վանքի* օրիներգը:

Հովհանն Օձնեցու ստեղծած շարականների երկրորդ կանոնը Սուրբ Ստեփանոս նախավկային նվիրվածն է և բաղկացած է յոթ երգից: *Օրհնութիւնը* ներառում է երեք պատկեր, որոնցից առաջինը՝ «Նահատակ բարի» սկզբնաբառերովը, իրավամբ համարվում է հեղինակի երաժշտական ժառանգության գոհարը: Այն ունի Գկ ձայնեղանակային նշումը, սակայն վերոնշյալ սկզբնաբառերի մեղեղին է միայն ընթանում տվյալ ձայնեղանակում, որոնցից հետո մեղեղին շեղում է իր ընթացքը դեպի Գկ դարձված՝ հաղորդելով այս երգին արևելյան ցայտուն արտահայտչականություն: Քանի որ Սբ. Ստեփանոս Նախավկան Հիսուսից հետո հանուն քրիստոնեական հավատքի նահատակված առաջին մարտիրոսն է եղել, Օձնեցին նրա հիշատակը հավերժացնում է

<sup>21</sup><sup>21</sup> Հ. Բախչինյան, Շարականի գրապատմական ուղին, էջ 127:

շքեղ շարականների մի գունագեղ շարքով։ Այս կանոնի «Ընդ երկնային հոգեղինաց» Հարցը ունի ԳՃ եղանակային նշումը, սակայն ընթանում է ԳՃ դարձվածում (հատկապես Գործատունը): Նշանակալից են նաև այս շարքի Մանկունքն ու Ճաշուն, որոնցում պահպանվել է Օձնեցու դարաշրջանի հնարույր ոճը։ Հովհան Մանդակունուց հետո Հովհան Օձնեցին է, որ կարգավորել է հայոց եկեղեցու երգեցողությունը և խմբագրել Շարակնոցը՝ իր ժամանակի հոգևոր պահանջների համաձայն։ Նա վերջնականապես արմատավորել է մեր ազգային եկեղեցու Առաքելական պաշտամունքային կարգավորությունը՝ հորինելով այն չորս կանոնները, որոնք մինչ օրս կատարվում են դեկտեմբերյան այն օրերին, երբ կաթողիկե աշխարհը նշում է Քրիստոսի Սուրբ Ծննդը։ Պատահական չէ, որ հայոց եկեղեցին իր ազգային սրբերի կարգին է դասել Հովհաննես Գ Օձնեցի հայրապետին և նրա հիշատակը տոնախմբում է քառասորդական պահոց չորրորդ շաբաթ օրը՝ Հովհան Որոտնեցի և Գրիգոր Տաթևացի մեծ վարդապետների հետ միասին<sup>22</sup>:

Հովհան Օձնեցու հեղինակած շարականների մյուս երկու կանոնների քննությունը թողնելով մի այլ պատեհ առիթի՝ հավելենք, որ ձեռագրերում երբեմն Հովհան Օձնեցուն են վերագրվում նաև մի շարք այլ շարականներ, որոնք հավանաբար ավելի ուշ շրջանում են հորինվել՝ հավանաբար առավել բարձր հարզ հաղորդելու միտումով։ Նշելի է նաև, որ Կիրակոս Գանձակեցու հիշատակած առանձնահատուկ ոճը, որով նա բնույթագրում է Ներսես Շնորհալու ստեղծած երաժշտական որոշ եղանակները, այն է՝ «Ոճ խոսրովային՝ է՝ որպես կատարեալ եղանակ երաժշտութեան»<sup>23</sup>, ամենայն հավանականությամբ սկիզբ է առնում դեռևս Օձնեցու լավագույն շարականներից։ Եվ հենց այս ինքնատիպ ոճի զարգացումն ու ճնշացումն է, որ հայոց հոգևոր երաժշտությունը դարձնում է այնքան գրավիչ, ազդեցիկ ու տպավորիչ, որ մեր շարականների լավագույն նմուշները գեթ մեկ անգամ ունկնդրողը, եթե անգամ օտարազգի է և չի հասկանում տվյալ երգի տեքստային իմաստը, կարող է այնպիսի խորունկ ապրումներ ունենալ, որպիսին երբեմ չեր ունեցել։ Իսկ նրանք, ում հասու է նաև մեր հոգևոր երգեցողության բանաստեղծական իմաստը, առավել ևս կարող են լիարժեքորեն ըմբոշինել այդ երգերի բացառիկ արտահայտչականությունն ու հմայքը։ Հայոց հոգևոր երգեցողությունը կարելի է անվանել լրւաբարգություն, և լրւաբար պաշտամունքի շքերթում իր պատվավոր տեղն է զբաղեցնում Հովհան Օձնեցին։ նրա լավագույն ստեղծագործությունները իրենց գեղարվեստական արժանիքներով կամուրջ են նետում հայոց

<sup>22</sup> Տե՛ս Խ. Պալյան, Հովհան Օձնեցուն..., էջ 96:

<sup>23</sup> Խոսրովային ոճի և բառի ծագման մասին տե՛ս Ն. Թահմիզյան, Ներսես Շնորհալին..., էջ 23-24, ծան. 71:

ոսկեղարի և զարգացած միջնադարի միջև՝ Սահակ-Մեսրոպից մինչև Գրիգոր Նարեկացի և Ներսէս Շնորհալի:

Միջնադարյան մեր անվանի և մեծատաղանդ երգահանները ջերմորեն հավասում էին, որ հոգևոր սրբազն երաժշտությունն ի զրու է ամոքելու մարդու հոգին, իսկ դրա շնորհիվ նաև մարմինը, քանզի վերջինիս ապաքինումը անմիջականորեն կախված է անձի հոգեվիճակից ու տրամադրությունից. թերևս պատահական չէ, որ հայերենում անձի մասին խոսելիս հաճախ նրան անվանում են «հոգի»: Երաժշտության միջոցով մարդկանց բուժմանը նպաստելու համար հայոց միջնադարում ապավինում էին եկեղեցական ութ-ձայների տեսությանը, ըստ որի՝ հիվանդությունը ախտորոշելուց հետո հարկավոր էր այդ հիվանդի համար երգել հատկապես այն ձայնեղանակին պատկանող մեղեղիներից, որոնց ունկնդրումը կարող էր նպաստել նրա ապաքինմանը<sup>24</sup>: Այս առումով Սբ. Հովհան Օձնեցուն կարելի է անվարան կերպով համարել մարդկային հոգիների ապաքինմանը նպաստող երգահան, որն իր ողջ գործունեության ընթացքում առաջնորդել է ժողովրդին ոչ միայն իր հայրապետական գավազանով, այլև երաժշտական աստվածատուր ձիրքով՝ իր ճարտարահյուս և հոգեպարար երգերով նպաստելով հայրենի ժողովրդի հոգեմտավոր բարօրությանը:

<sup>24</sup> Միջնադարյան Հայաստանում կիրառվող երաժշտաբուժության մասին տե՛ս Կոմիտաս Վարդապետ, Բժշկութիւն երաժշտութեամբ (Մէկ էջ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 2359 համար ձեռազրէն), Թէոդիկ, Ամենուն Տարեցոյցը, Վ.Պոլիս, 1915, էջ 242-246, նաև՝ Արփի Վարդումեան, Երաժշտաբուժութեան մասին պատկերացումները հայոց մէջ, «Բազմավալք», 2007, էջ 493-509, և Արփի Վարդումեան, Հայոց ձեռազրէրը երաժշտաբուժութեան մասին (Ակնարկներ), «Հայկագեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 2012, 283-297:

Арпи Вардумян

## МУЗЫКАЛЬНОЕ НАСЛЕДИЕ СВ. ОВАННЕСА ОДЗНЕЦИ

### Резюме

**Ключевые слова:** музыкальное наследие, средневековый мыслитель, армянский католикос, канон шараканов, церковное песнопение

Средневековый армянский мыслитель Св. Ованнес Одзнеци жил и творил в конце 7-го и в начале 8-го веков в селе Одзун (Лори). Он был 34-ым армянским католикосом. Впоследствии его приобщили к лицу святых за огромную мудрость и великие дела, совершенные во имя родины. Будучи автором мудрых трактатов, он славился своим философским мышлением.

Ованнес Одзнеци был разносторонне одаренной личностью. Он владел несомненным музыкальным дарованием и был автором многих вдохновенных церковных песнопений – шараканов. В частности, Одзнеци специально создал 4 канона шараканов, которые по сей день исполняются в армянской церкви к концу декабря – в те дни, когда весь католический мир празднует Святое Рождество Христово (Армянская Апостольская Церковь отмечает Рождество и Богоявление 6-го января).

Ованнес Одзнеци внес значительный вклад в армянскую духовную музыку своими высокохудожественными песнопениями.

Arpi Vardumyan

## MUSICAL HERITAGE OF ST. HOVHANNES ODZNETSI

### Summary

**Key words:** musical heritage, medieval thinker, Armenian Catholicos, canon of sharakans, church chant

The medieval Armenian thinker St. Hovhannes Odznetsi lived and worked in the late 7th and early 8th centuries in the village of Odzun (Lori). He was the 34th Armenian Catholicos. Subsequently, he was introduced to the face of the saints for his great wisdom and great deeds done for his homeland. Being the author of wise treatises, he was famous for his philosophical thinking.

Hovhannes Odznetsi was a versatile gifted person. He possessed undoubted musical talent and was the author of many inspired church songs – sharakans. In particular, Odznetsi specially created 4 canons of sharakans, which are still being performed in the Armenian Church by the end of December – on those days when the whole Catholic world celebrates Holy Christmas (the Armenian Apostolic Church celebrates Christmas and the Epiphany on January 6).

Hovhannes Odznetsi has made a significant contribution to the Armenian spiritual music with his highly artistic chants.